



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*5 հոկտեմբերի 2011 թվականի
թիվ 444-Ա, քաղաք Երևան*

**«ՀԱՄԱՐ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), 2011 թվականի հոկտեմբերի 5-ի դռնբաց նիստում քննարկեց «Համար 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև՝ Ընկերություն) կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն ներկայացնելու պարտավորության չկատարման հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովը, 2011 թվականի մայիսի 3-ի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մի շարք առողջապահական հաստատությունների կողմից տեղեկատվություն ներկայացնելու մասին» թիվ 163-Ա որոշման (այսուհետ՝ Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշում) հիման վրա դիմել է Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում ներկայացնելու համապատասխան տեղեկատվություն: Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշումն ուժի մեջ է մտել այն Ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից՝ 2011 թվականի մայիսի 8-ից, որից հետո Ընկերությունը պարտավոր էր Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշմամբ սահմանված տեղեկատվությունը ներկայացնել մինչև 2011 թվականի մայիսի 17-ը ներառյալ: Սակայն, Ընկերությունը Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշմամբ սահմանված տեղեկատվությունը ներկայացրել է 2011 թվականի մայիսի 23-ին:

Փաստորեն Ընկերությունը Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշմամբ սահմանված տեղեկատվությունը որոշմամբ նախատեսված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել, ինչից ելնելով Հանձնաժողովը 2011 թվականի հուլիսի 8-ի ««Համար 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 288-Ա որոշմամբ Ընկերության կողմից Օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ հարուցել է վարչական վարույթ:

Օրենքի 28-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ վարույթ, հետազոտություն, ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ ապրանքային շուկայի ուսումնասիրության) և (կամ) դիտանցում իրականացնելու կամ տնտեսվարող սուբյեկտներին առնչվող այլ հարցի կապակցությամբ Հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են Հանձնաժողով

ներկայացնել որոշմամբ սահմանված փաստաթղթեր և այլ տեղեկատվություն: Օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ Հանձնաժողովի որոշումը տնտեսվարող սուբյեկտների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից ենթակա է կատարման՝ որոշման մեջ նշված ժամկետում: Օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է, որ սույն օրենքի խախտման դեպքում, նախնական ծանուցմամբ, Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ կիրառել օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ տալու նախազգուշացում և խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարություն:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «թ» կետերը, 28-րդ հոդվածի երկրորդ մասը, 31-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի առաջին մասը, Հանձնաժողովը՝

ո թ ո շ ու մ է

1. Հանձնաժողովի թիվ 163-Ա որոշմամբ նախատեսված տեղեկատվությունը որոշմամբ սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Համար 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը տալ նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Համար 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ